## Արձանագրություն 3

«Երևանտրանս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՏ-ԳՄԱՊՁԲ-8/17-6» ծածկագրով մրցույթի գնանշման հարցում ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Երևան

12.09.2017թ.
ժ.10:00

Մասնակցում են՝

Նախագահ - Ե.Խաչիբաբյան

անդամներ - Ա.Հայրապետյան
Ա.Աբգարյան

### Հայտերի բացման մասին

1. Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ 1 465 800 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

2. Հրավերով սահմանված ժամկետում և սահմանված պահանջներին համապատասխան գնային առաջարկություն է ներկայացրել «Մոսէքո» ՍՊԸ-ն (ք.Երևան, Նար-Դոս 75), «Հույս մոտոր» ՍՊԸ-ն (ք.Երևան, Արին Բերդի 17), «Կարկոմավտո» ՍՊԸ-ն (ք.Երևան, Կոմիտաս 47) և «Տուրբոլայն» ՍՊԸ (ք.Երևան, Շիրազի 39/1):

3. Բոլոր մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԵՏ-ԳՄԱՊՁԲ-8/17-6» ծածկագրով մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման՝ բացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Քվեարկություն՝ կողմ - 3, դեմ - 0:

4. «Հույս մոտոր» ՍՊԸ-ի, «Կարկոմավտո» ՍՊԸ-ի և «Տուրբոլայն» ՍՊԸ-ի ներկայացրած ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը և առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների հրավերով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանությունը գնահատվել է որպես համապատասխանող (ճիշտ), իսկ «Մոսէքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաթեթում բացակայում էր գնային առաջարկը (հավելված 5), ուստի վերջինիս ներկայացրած հայտը չքննարկվեց:

Քվեարկություն՝ կողմ - 3, դեմ - 0:

5. Մասնակիցների կողմից առաջարկված գները անհրաժեշտ չափաբաժինների համար ներկայացված են ստորև աղյուսակում.

| Չափա-բաժին | Վառելիքի անվանումը, չափի միավորը և պահանջվող քանակը | «Հույս մոտոր» ՍՊԸ | «Կարկոմավտո» ՍՊԸ | «Տուրբոլայն» ՍՊԸ |
|---|---|---|---|---|
| 1 | ավտոմեքենայի շարժիչի յուղ, 600 (վեց հարյուր) լիտր | - | 1 077 000 | 1 080 000 |
| 2 | Յուղի զտիչ, 2009 թ. արտադրության Կիա օպտիմա մակնիշի մեքենայի համար, 5 հատ | 4150 | - | 10 000 |
| 3 | Յուղի զտիչ, 2011-2014 թթ. արտադրության Կիա սեռատո մակնիշի մեքենայի համար, 9 հատ | 7470 | - | 18 000 |
| 4 | Յուղի զտիչ, 2009-2010 թթ. արտադրության Նիսան տեանա մակնիշի մեքենայի համար, 3 հատ | 2490 | - | 6 000 |
| 5 | Յուղի զտիչ, 2013 թ. արտադրության Տոյոտա կորոլա մակնիշի մեքենայի համար, 3 հատ | 3438 | - | 6 000 |

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա, որպես առավել ցածր գին առաջարկած մասնակիցների՝ հանձնաժողովը որոշեց՝

1 չափաբաժնում հաղթող ճանաչել՝ «Կարկոմավտո» ՍՊԸ-ին

2, 3, 4, 5 չափաբաժիններում հաղթող ճանաչել՝ «Յույս մոտոր» ՍՊԸ-ին

Քվեարկություն ՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ե.Խաչիքարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Սահակյան

անդամներ Ա.Հայրապետյան

Ա.Աբգարյան